



ԱՆԱՀԻՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի վարիչի
ժամանակավոր պաշտոնակատար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ «Աշխատավարձի կազմակերպումը
ժառայությունների ոլորտում» մասնագիտացման
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏՏ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ Կառավարության կողմից ՏՏ ոլորտը տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը ճանաչելը պատահական չէ: Հայաստանում կան ոլորտի կայուն և երկարաժամկետ զարգացումն ապահովելու բոլոր նախադրյալները, որոնցից գլխավորը բավականին բարձր մրցակցային ներուժ ունեցող աշխատուժի առկայությունն է: Հողվածում ներկայացված են ՏՏ ոլորտի աշխատանքի շուկայի առանձնահատկությունները, ոլորտի զարգացման մարտահրավերները և դրանց լուծման հնարավոր ուղիները:

Հիմնաբառեր. ՏՏ ոլորտ, աշխատուժ, մասնագիտական ուսուցում, արտասահմանյան ուղղակի ներդրումներ, զբաղվածություն

JEL: E2, E20, E24

Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի զարգացումն իր արտացոլումն է ունենում մարդու կյանքի բոլոր բնագավառներում: Տեղեկատվական տեխնոլոգիաները նպաստում են կրթության, առողջապահության, մշակույթի, տնտեսության և այլ ոլորտներում տեղի ունեցող փոփոխություններին¹: ՏՏ ոլորտի զարգացումը հետարդյունաբերական հասարակության

¹ Տե՛ս **Семенова М.К.**, Влияние информационных технологий на рынок труда/ Информационные технологии в государственном управлении и социальной сфере. Томск , 2014, էջ 329:

(ներառյալ՝ տեղեկատվական հասարակությունը) և համապատասխան տնտեսության ցանկացած տեսակի ձևավորման անհրաժեշտ պայման է: Առկա փորձը վկայում է ՏՏ ոլորտի ներդրման ու զարգացման մակարդակի և տնտեսական աճի տեմպի արագացման միջև ուղիղ կապի մասին²:

2000 թ. ՀՀ Կառավարությունը ՏՏ ոլորտը հայտարարել է Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը: Հայաստանը տարածաշրջանում առաջատար դիրքեր է զբաղեցնում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով. բավականին բարձր մրցակցային ներուժ ունեցող աշխատուժ, ՀՆԱ-ում մասնաբաժին, կազմակերպությունների թվի ու ընդհանուր շրջանառության աճի տեմպեր:

Հայաստանում մրցակցային բարձր առավելություններ ունեցող տեխնիկական աշխատուժի շնորհիվ ՏՏ խոշոր ընկերությունների և վերազգային կազմակերպությունների համար շահավետ, նպաստավոր պայմաններ են ապահովվում ներդրումներ կատարելու համար:

Հայաստանը տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ ունի մի քանի մրցակցային առավելություններ, որոնցից են՝

- միջազգային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների իրականացման կարողություններ,
- ՏՏ և հարակից այլ մասնագիտացումներով բուհական հիմնարար ծրագրեր,
- մրցակցային բարձր մակարդակ, հմտություններ ունեցող էժան աշխատուժ և ցածր գործառնական ծախսեր,
- պետության կողմից ոլորտին հատկացվող շոշափելի աջակցություն և ներդրումային դաշտը բարելավելու պատրաստակամություն,
- ուժեղ սփյուռքի ներկայություն Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում,
- խոշոր վերազգային ընկերությունների հետ համագործակցության մեծ փորձ,
- մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող իրավական դաշտ³:

Հանրապետությունում շարունակվում են նախկինում ներդրված բարեփոխումները մի շարք ուղղություններով, որոնցից ՏՏ ընկերությունների համար, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման առումով, առավելապես ուշագրավ են արտաքին առևտրի, ընկերությունների հիմնադրման, պայմանագրերի կիրարկման, ներդրողների պաշտպանվածությունն ապահովելու, սեփականության գրանցման և հատկապես հարկերի վճարման ոլորտում իրականացված և իրականացման ընթացքում գտնվող միջոցառումները⁴:

Հայաստանում արդյունավետորեն կիրառվում է ՏՏ ոլորտի պետական աջակցությանն ուղղված օրենսդրական փաթեթը: Համապատասխան հա-


² Տե՛ս Ըալլագովա Լ.Մ., Роль информационных технологий в развитии России / Л.М. Цаллагова, А.В. Джиоев // Актуальные проблемы социологии молодежи, культуры, образования и управления: материалы международной конференции Екатеринбург, УрФУ, 2014, т. 4, էջ 217–221:

³ Տե՛ս Enterprise incubator foundation, ՏՀՏ ոլորտը Հայաստանում, 2018, էջ 12:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 6–7:

վաստագիր ունեցող ՏՏ ոլորտի շուրջ 360 սկանակ կազմակերպություններ օգտվում են հարկային արտոնություններից, որը ենթադրում է շահութահարկի 0% և եկամտային հարկի 10% դրույքաչափերի կիրառում⁵:

2018 թ. ընթացքում Հայաստանում գործել է մոտ 800 ՏՀՏ (տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ) կազմակերպություն: Միայն վերջին տարում ՏՀՏ ոլորտի կազմակերպությունների թիվն աճել է 150-ով կամ 23%-ով, իսկ ՏՀՏ ոլորտի աշխատատեղերի թիվը՝ մոտ 4200-ով կամ 27,4%-ով (գծապատկեր 1): Տեղական կազմակերպությունների մասնաբաժինը նշված 800 կազմակերպությունների մեջ կազմում է մոտ 70%: 2008–2018 թթ. տարեկան, միջին հաշվով, հիմնվել է 54 ՏՀՏ ձեռնարկություն: Տեղական և օտարերկրյա կազմակերպություններում աշխատում է ամբողջ աշխատուժի, համապատասխանաբար՝ 52.5%-ը և 47.5%-ը, թեև տեղական կազմակերպությունները մոտ 2 անգամ ավելի են, քան օտարերկրյա կազմակերպությունները (համապատասխանաբար՝ 557 և 243)⁶: Դա նշանակում է, որ 1 օտարերկրյա կազմակերպության աշխատողների թիվը մոտ 2 անգամ ավելի է:



Աղբյուր՝ EIF-ի տվյալներ:

Գծապատկեր 1. ՏՀՏ ոլորտում զբաղվածների թիվը 2008–2018 թթ.

Օտարերկրյա կազմակերպությունների մասնաձյուղերի և ներկայացուցչությունների գործունեությունից ստացված եկամտի փոքր մասն է մնում երկրում՝ աշխատավարձերի և այլ ծախսերի տեսքով: Անկախ այդ հանգամանքից, մասնաձյուղերի գործունեությունը դրական ազդեցություն ունի թե՛ ոլորտի և թե՛ ամբողջ տնտեսության վրա:

Ներկայումս աշխատանքի և կրթական շուկաները գործունեության տարբեր մեխանիզմներ և ժամանակային շրջանակներ ունեն: Մինչ կրթական համակարգը զարգանում է երկարաժամկետ քաղաքականության և ռազմավարության հիման վրա, ՏՏ ոլորտը պետք է մշտապես հարմարվի շուկայի արագ փոփոխվող պահանջներին և տեխնոլոգիական նորարարություններ:

⁵ Տես «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, Կ-664-15.11.2014-ՏՀ-010/0:

⁶ Տես Enterprise incubator foundation, ՏՀՏ ոլորտը Հայաստանում, 2018, էջ 16-17:

րին, որպեսզի մնա մրցունակ համաշխարհային, ազգային և տեղական շուկաներում⁷:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ շատ երկրներ հանդես են գալիս SS մասնագետների առաջարկի և պահանջարկի կարգավորման նոր տեխնոլոգիաների և գործիքների մշակման նախաձեռնություններով: Հմտությունների մոդելների ստանդարտացման, SS ոլորտի մասնագիտական և կրթական չափորոշիչների մշակման, համապատասխան ֆակուլտետների ընդունելությունների ընդլայնման միջոցառումները որոշ չափով նպաստում են աշխատանքի շուկայի և SS կրթության շուկաների մերձեցմանը⁸:

2017–2018 ուստարում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտացումներով սովորող ուսանողների թիվը 10070 է, որը ՀՀ բուհում սովորող ուսանողների ընդհանուր թվի 12.8%-ն է (78 474)⁹: Չնայած կրթական համակարգի վերջին բարեփոխումներին՝ դասավանդման այժմյան մեթոդները չեն համապատասխանում այն պահանջներին, որ ներկայացվում են SS ոլորտի բարձրակարգ կադրերին: Դեռ ավելին, կրթական համակարգում առկա երկու փոխկապված խնդիրները՝ պրոֆեսորադասախոսական կազմի ցածր վարձատրությունը և մեծ տարիքը, հանգեցրել են այնպիսի իրավիճակի, որ համակարգը լճացել է, մինչդեռ ուսանողների թիվը տարեցտարի աճում է:

SS կազմակերպությունների ներկայացուցիչները համարում են, որ ուսանողների ներկա թիվը չի բավարարում ոլորտի տեխնիկական մասնագետների պահանջարկը: Նշենք, որ ոլորտում շուրջ 2000 թափուր աշխատատեղ կա, և շրջանավարտների մի մասն ի վիճակի չէ ոլորտում աշխատելու¹⁰: Պատճառն այն է, որ շրջանավարտների որակավորման մակարդակը չի համապատասխանում ոլորտի պահանջներին, նրանցից շատերը պետք է անցնեն լրացուցիչ աշխատանքային վերապատրաստում անհրաժեշտ որակավորում ստանալու և լրիվ դրույթով աշխատատեղեր զբաղեցնելու համար: Տեղական կազմակերպություններից քչերն են ի գորու ապահովելու աշխատակիցների շարունակական վերապատրաստման գործընթացը. այս առումով, կարևորվում է որոշակի միջոցների ու համապատասխան անձնակազմի առկայությունը: Կազմակերպություններում նաև կիրառվում է չվարձատրվող աշխատանքային փորձառությունը: Տվյալ փորձառությունն անցնողները նախ վերապատրաստվում են, որից հետո լավագույններն ընդունվում են մշտական աշխատանքի: Նոր ընդունված աշխատողները սովորաբար լրիվ ծավալով աշխատանքի են անցնում առնվազն երկամսյա ժամկետից հետո:

Կազմակերպությունների զարգացմանը խոչընդոտող և խնդրահարույց հիմնահարցեր են բարձր որակավորում ունեցող մասնագետների պակասը և աշխատուժի ներգրավումը, որոնք առաջանում են աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության հետևանքով: Տեխնիկական մասնագիտացումներով ուսանողների պահանջարկի աճին զուգընթաց նրանց

⁷ Տե՛ս Cattaneo G., Kolding M., Lifonti R., Hüsing T., Korte W.B., Anticipating the development of the supply and demand of e-skills in Europe 2010-2015. Milan, Bonn: European Commission, 2009. http://ec.europa.eu/enterprise/sectors/ict/files/e-skills_foresight_scenarios_2015_en.pdf

⁸ Տե՛ս Research Study on High-Level Skill Needs in NI ICT Sector. Final Report. Oxford Economics, 2009:

⁹ Բարձրագույն կրթությունը 2017/2018 ուսումնական տարում, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-մարտին, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018:

¹⁰ Տե՛ս <https://itel.am/am/news/8521>

թվի շարունակական նվազման միտում կա և որակյալ մասնագետների արտահոսք:

Նոր տեխնոլոգիաների և ծրագրային հարթակների ի հայտ գալը հանգեցնում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ստացված գիտելիքների ու հմտությունների կենսապարբերաշրջանի կրճատմանը: Դա հանգեցնում է նաև ոլորտի աշխատողների մասնագիտական և որակական բնութագրերի նկատմամբ աշխատանքի շուկայի և գործատուների պահանջների փոփոխությանը: Այս առումով, կարևորվում է ՏՏ կադրերի պատրաստման ուսումնական ծրագրերի պարբերական թարմացումը ինչպես կրթական համակարգում, այնպես էլ մասնագիտական ուսուցման շրջանակներում¹¹:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդյունքում ավելացել է հեռավար աշխատողների (ֆրիլանսեր) թիվը: Հենց ՏՏ ոլորտի զարգացումն է նպաստել հեռավար զբաղվածության առաջացմանը: Հեռավար աշխատողների հիմնական տարբերությունն այն է, որ նրանց զբաղվածության ժամանակ օգտագործվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինչպես նաև այն, որ այդ աշխատողներն ունեն բարձր որակավորում¹²:

ՏՏ ոլորտի առանձնահատկություններից կարելի է նշել աշխատանքի համատեղումը, որը ներառում է նրանց, ում համար ՏՏ-ն զբաղվածության առաջնային ոլորտը չէ, կամ հիմնական աշխատատեղը համատեղվում է վարչակառավարչական գործունեության հետ¹³: Հեռավար զբաղվածությունը ներկայումս իր տեղն ունի աշխատանքի բնագավառում՝ համաշխարհային միտումների կառուցվածքում: Փաստացի աշխատանքը դարձել է համաշխարհային ռեսուրս, քանի որ համացանցի օգնությամբ անցնում է ազգային սահմանները: Անշուշտ, դա կարող է կիրառվել նաև սահմանափակ աշխատանքային հնարավորություններով ռեսուրսների դեպքում¹⁴:

Հայաստանի ՏՏ ոլորտում ներգրավված մասնագետների մեծամասնությունը արական սեռի ներկայացուցիչներ են (68%): Ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի կին աշխատողների տեսակարար կշիռը 2017 թ. համեմատությամբ աճել է 2%-ով: Անհրաժեշտ է նշել, որ ՏՏ ոլորտում գենդերային խնդիրն արդիական է բոլոր երկրներում: Այնուամենայնիվ, այստեղ մասնագետների նկատմամբ պահանջարկի աճի միտումները զգալիորեն ընդլայնում են ՏՏ ոլորտում բարձր որակավորմամբ աշխատանք ունենալու կանանց հնարավորությունները: Այսպես՝ եթե եվրոգոտում 2002 թ. տղամարդկանց և կանանց հարաբերակցությունը 7:1¹⁵ էր, ապա 2015–2016 թթ. կրճատվել է՝ հասնելով 5:1-ի և 4:1-ի¹⁶: 2017 թ. եվրոգոտում ՏՏ ոլորտում զբաղված կանանց տեսակարար կշիռը կազմել է 17,2%:

¹¹ Տե՛ս **Мамедова М.Г.**, Объектно-ориентированный подход к определению релевантности информационно-технологического образования спросу на рынке ИТ-специалистов // Образование и наука. № 5, 2014, էջ 54–66:

¹² Տե՛ս **Шермазанова С.В.**, Влияние информационных технологий на изменение социально-трудовых отношений/ Вестник МГУС, №, 2008, էջ 29–34:

¹³ Տե՛ս **Земнухова Л.В.**, IT –работники на рынке труда/ Sociology of Science and Technology. Volume 4. No. 2, 2013:

¹⁴ Տե՛ս **Гладышева А.В., Горбунова О.Н.**, Перспективы применения информационных технологий на рынке труда специфических трудовых ресурсов/ Социально-экономические явления и процессы. No. 10, 2013, էջ 54–59:


¹⁵ Տե՛ս Eurostat Year book 2004. The statistical guide to Europe Data 1992–2002.

<http://ec.europa.eu/eurostat/documents/3217494/5648861/KS-CD-04-001-EN.PDF/05371ffe-c41c-4>

¹⁶ Տե՛ս Eurostat Year book 2015. <http://ec.europa.eu/eurostat/documents/3217494/7018888/KS-HA-15-001-EN-N.pdf/6f0d4095-5e7a-4aab-af28-d255e2bcb395>

SS ոլորտը հսկայական արտահանման ներուժ ունի և կարող է մեծ ներդրում ունենալ Հայաստանի տնտեսության աճի ու զարգացման գործում¹⁷: Ներկայումս Հայաստանում արտադրվող տեղեկատվական տեխնոլոգիաների ապրանքների և ծառայությունների 44%-ն արտահանվում է, ինչը արտահանման ընդհանուր ծավալի 15%-ն է կազմում: Ոլորտում զբաղվածների թվի աճին զուգահեռ աճում են նաև արտահանման ծավալները: 2010 թ., ոլորտում զբաղվածների թվի նվազմամբ պայմանավորված, կրճատվել են նաև արտահանման ծավալները: Վերջին 10 տարիների ընթացքում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (S<S) ոլորտում աշխատատեղերի թիվն ավելացել է 4 անգամ, իսկ արտահանման ծավալները՝ ավելի քան 5 անգամ:

Տվյալ փաստի մասին է վկայում նաև S<S բնագավառում արտահանման ծավալների փոփոխության վրա զբաղվածների թվի փոփոխության ազդեցությունը, որը ներկայացված է կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության հիման վրա:



Աղբյուր՝ EIF-ի տվյալներ

Չժայատկեր 2. Զբաղվածների թվի և արտահանման ծավալների միջև ռեգրեսիոն կախվածությունը S<S ոլորտում 2008–2018 թթ.

S<S ոլորտի ընդհանուր շրջանառությունը կազմում է Հայաստանի ՀՆԱ 6,7%-ը, մինչդեռ այդ բնագավառում զբաղվածների տեսակարար կշիռը տնտեսությունում զբաղվածների ընդհանուր թվում 1,5% է: Հարկ է նշել, որ վերջին տարիներին SS ոլորտի աճի տեմպը գերազանցում է ՀՆԱ աճի տեմպը ավելի քան 5 անգամ (2014 թ.՝ 7 անգամ)¹⁸:

Հայաստանում SS բնագավառի զարգացմանը մեծապես նպաստում է վենչուրային հիմնադրամների գործունեությունը, որը սկսվել է 2011 թ.: SS ենթակառուցվածքի զարգացումից բացի դրանք խթանում են նաև տվյալ ոլորտում գործող կազմակերպությունների նորարարական նախաձեռնություն-

¹⁷St'u Melkumyan A., Workforce development assessment. IT workforce supply survey/ Competitive Armenian private sector project/ 2006, էջ 4:

¹⁸ Հեղինակների հաշվարկներ:

ները, նպաստում արտասահմանյան շուկաների հետ կապերի հաստատմանը և սեփական կարողությունների զարգացմանը:

SS ոլորտի զարգացման մարտահրավերներն են՝

- մասնագիտական ուսուցման ոչ բավարար մակարդակը,
- Հայաստանում SS ոլորտի զարգացումը հանգեցրել է մասնագետների աշխատավարձի կտրուկ աճին, քանի որ թափուր աշխատատեղերի քանակը ավելին է, քան բարձր որակավորում ունեցող աշխատողների թիվն է, այսինքն՝ առկա է հավելյալ պահանջարկ: Այդ ձեռքավածքը որոշ չափով լրացվում է իրանցի ծրագրավորողների միջոցով, բայց դա խնդրի երկարաժամկետ լուծում չէ: Ակնկալվում է, որ մինչև 2025 թ. Հայաստանում SS ոլորտի մասնագետների լրացուցիչ պահանջարկը կազմելու է 25,000, սակայն մասնագետների առաջարկի ներկայիս աղբյուրները չեն կարող բավարարել այդ պահանջարկը¹⁹:

Առաջարկի և պահանջարկի միջև ձեռքավածքը կարելի է կրճատել կարճատև կրթական ծրագրերի ներդրմամբ և կիրառմամբ, ինչպես, օրինակ, դա արվում է «Microsoft Innovation Center Armenia» կազմակերպության և այլ կենտրոնների կողմից: Կենտրոնները նախաձեռնում են նաև ստարտափներին ուղղված ծրագրեր, որոնց միջոցով աջակցություն է տրամադրվում նորարարական SS արտադրանքի մշակման հարցում:

Նշված մարտահրավերները հաղթահարելու դեպքում Հայաստանում SS ոլորտը կարող է դառնալ ազգային տնտեսության առաջատար բնագավառ՝ աշխատանքով ապահովելով բարձր որակավորում ունեցող երիտասարդների, ինչը կնպաստի ուղեղների արտահոսքի կրճատմանը:

Այսպիսով՝ ներկայումս ՀՀ SS ոլորտում առկա առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը պայմանավորված է բարձր որակավորում ունեցող մասնագետների պակասով, որակյալ մասնագետների արտահոսքով և աշխատուժի ներգրավման խնդիրներով, ինչի մասին վկայում է մոտ 2000 թափուր աշխատատեղերի առկայությունը: Նշված հիմնախնդրի լուծմանը մեծապես կարող են նպաստել SS մասնագետների առաջարկի և պահանջարկի կարգավորման նոր տեխնոլոգիաների և գործիքների մշակումն ու կիրառումը, հմտությունների մոդելների ստանդարտացումը, ոլորտի մասնագիտական ու կրթական ստանդարտների մշակումը, համապատասխան ֆակուլտետների ընդունելության թվի մեծացման միջոցառումները և SS կադրերի պատրաստման ուսումնական ծրագրերի պարբերական թարմացումները կրթական համակարգում և մասնագիտական ուսուցման շրջանակներում:

Օգտագործված գրականություն

1. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, Կ-664-15.11.2014-SՀ-010/0:
2. Բարձրագույն կրթությունը 2017/2018 ուսումնական տարում, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-մարտին, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018:
3. Земнухова Л.В., IT–работники на рынке труда/ Sociology of Science and Technology. Volume 4. No. 2, 2013.

¹⁹ Տես Appleby S., Nerd Nation: The People Factor behind Armenia's Tech Prowess /Tbilinomics/ 2018. <http://tbilinomics.com/index.php/en/creative-economy-en/564-nerd-nation-the-people-factor-behind-armenias-tech-prowess>

4. Семенова М.К., Влияние информационных технологий на рынок труда/ Информационные технологии в государственном управлении и социальной сфере. Томск, 2014.
5. Цаллагова Л.М., Роль информационных технологий в развитии России / Л.М. Цаллагова, А.В. Джиоев // Актуальные проблемы социологии молодежи, культуры, образования и управления: материалы международной конференции. Екатеринбург: УрФУ, 2014.
6. Мамедова М.Г., Объектно-ориентированный подход к определению релевантности информационно-технологического образования спроса на рынке ИТ-специалистов // Образование и наука. № 5, 2014.
7. Шермазанова С.В., Влияние информационных технологий на изменение социально-трудовых отношений/ Вестник МГУС, №1, 2008.
8. Гладышева А.В., Горбунова О.Н., Перспективы применения информационных технологий на рынке труда специфических трудовых ресурсов/ Социально-экономические явления и процессы. No. 10, 2013.
9. Enterprise incubator foundation, ՏՀՏ դիրքերը Հայաստանում, 2018:
10. Cattaneo G., Kolding M., Lifonti R., Hüsing T., Korte W.B., Anticipating the development of the supply and demand of e-skills in Europe 2010-2015. Milan, Bonn: European Commission, 2009. http://ec.europa.eu/enterprise/sectors/ict/files/e-skills_foresight_scenarios_2015_en.pdf
11. Research Study on High-Level Skill Needs in NI ICT Sector. Final Report. Oxford, Economics, 2009.
12. Eurostat Year book 2004. The statistical guide to Europe Data 1992–2002. <http://ec.europa.eu/eurostat/documents/3217494/5648861/KS-CD-04-001-EN.PDF/05371ffe-c41c-4>
13. Eurostat Year book 2015. <http://ec.europa.eu/eurostat/documents/3217494/7018888/KS-HA-15-001-EN-N.pdf/6f0d4095-5e7a-4aab-af28-d255e2bcb395>
14. Appleby S., Nerd Nation: The People Factor behind Armenia's Tech Prowess /Tbilinomics/ 2018. <http://tbilinomics.com/index.php/en/creative-economy-en/564-nerd-nation-the-people-factor-behind-armenias-tech-prowess>,
15. Melkumyan A., Workforce development assessment. IT workforce supply survey/ Competitive Armenian private sector project/ 2006.
16. <https://itel.am/am/news/8521>

АНАИТ МЕЛКУМЯН

*Врио кафедры экономики труда АГЭУ,
доктор экономических наук, профессор*

ЭМИЛЬ ГРИГОРЯН

*Студент II курса магистратуры АГЭУ по специализации
“Организация заработной платы в сфере услуг”*

Вопросы занятости в ИТ-секторе РА.– Не случайно Правительство РА признает ИТ одним из приоритетных секторов экономического развития. Есть все предпосылки для обеспечения устойчивого и долгосрочного развития данного сектора в Армении, главной из которых является наличие рабочей силы с довольно высоким конкурентным потенциалом. В статье представлены особенности рынка труда в ИТ-секторе, проблемы развития отрасли и возможные пути их решения.

Ключевые слова: *ИТ-сектор, рабочая сила, профессиональное обучение, прямые иностранные инвестиции, занятость.*

JEL: E2, E20, E24

АНАИТ МЕЛКУМЯН

*Acting as Head of ASUE Chair of Labour Economy,
Doctor of Economics, Professor*

EMIL GRIGORYAN

*Graduate student in Master’s Degree at ASUE, majoring in
“Organizing Wages in the Service Sector”*

Employment Issues in the RA IT-Sector.– It is not by chance that the RA Government recognizes IT as one of the priority sectors of economic development. There are all prerequisites for ensuring sustainable and long-term development of this sector in Armenia and the main one is the availability of labour force with a fairly high competitive potential. The article presents the features of the labour market in the IT-sector, the problems of the development of the sphere and possible solutions.

Key words: *IT-sector, labour force, vocational training, direct foreign investments, employment.*

JEL: E2, E20, E24